ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ՝ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՔԱՂԱՔ ՍՈՒՎՈՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Նունե Պետրոսյան,

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի տեղակալ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Կորեայի Հանրապետություն (քաղաք Սուվոն), 2023 թվականի հոկտեմբերի 22-ից 26-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

4. **Գործուղման նպատակը.**

2023 թվականի հոկտեմբերի 23-ից 25-ը Կորեայի Հանրապետությունում (քաղաք Սուվոն) տեղի ունեցած «Ութերորդ Ասիա-խաղաղօվկիանոսյան քաղաքաշինական ֆորումին» մասնակցելու նպատակով:

5. **Քննարկված թեմաները.**

Կոմիտեի նախագահի տեղակալ Նունե Պետրոսյանը ներկա է եղել մի շարք քննարկումների, որոնց շրջանակում անդրադարձ է կատարվել տարածաշրջանի պետությունների միջև քաղաքաշինության և ճարտարապետության ոլորտներում համագործակցությանն առնչվող տարբեր հարցերի:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

2023 թվականի հոկտեմբերի 23-ին Նունե Պետրոսյանը մասնակցել է «Ութերորդ Ասիա-խաղաղօվկիանոսյան քաղաքաշինական ֆորումի» բացման արարողությանը, մասնակից պետությունների ոլորտային բարձրաստիճան պաշտոնյաների համար նախատեսված բարձր մակարդակի նիստին, այցելել «Քաղաքաշինական լուծումներ» ցուցահանդեսի տաղավարներ:

Քննարկումների ընթացքում ընդգծվել է քաղաքային և տարածական պլանավորման առանցքային նշանակությունը տնտեսական, սոցիալական, մշակութային և բնապահպանական նպատակների իրականացման, աղետների ռիսկերին դիմակայման գործընթացում: Տարբեր պետությունների մասնակիցներ ներկայացրել են իրենց պետություններում կայուն զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները և առկա մարտահրավերները:

Մասնակից պետությունների ոլորտային բարձրաստիճան պաշտոնյաների համար նախատեսված բարձր մակարդակի նիստին Նունե Պետրոսյանը ելույթով ներկայացրել է Կոմիտեի գործունեությունը, քաղաքաշինության, տարածական պլանավորման բնագավառներում իրականացվող աշխատանքները: Նիստի շրջանակում ընդունվել է կոմյունիկե, որը սահմանում է տարածաշրջանի պետությունների միջև փոխգործակցության ուղղություններն ու հեռանկարները:

«Քաղաքաշինական լուծումներ» ցուցահանդեսի շրջանակում ներկայացվել են Կորեայի Հանրապետության տնտեսական նվաճումները, կանաչ էներգիայի կիրառման, աղբի վերամշակման և օրգանական սննդի ոլորտներում առկա հաջողությունները:

2023 թվականի հոկտեմբերի 23-ին Նունե Պետրոսյանը մասնակցել է միջոցառման հատուկ պատվիրակների համար նախատեսված Գալա ընթրիքին, որին ներկա են եղել Կորեայի Հանրապետության Սուվոն քաղաքի քաղաքապետ Լի Ջա Ջուն, մի շարք պետությունների ներկայացուցիչներ, մշակույթի գործիչներ:

2023 թվականի հոկտեմբերի 24-ին Նունե Պետրոսյանը, որպես բանախոս մասնակցել է «Քաղաքաշինության ներառական թվայնացում» խորագրով պանելային քննարկմանը, ներկայացրել Հայաստանում խելացի քաղաքների ձևավորման նպատակով իրականացվող պիլոտային ծրագրերի մանրամասները: Նշվել են հիմնական ուղղությունները՝

- խելացի ցուցատախտակների տեղադրում, փողոցի անցումների լուսավորություն՝ ամրագրված ձայնային ազդանշաններով հաշմանդամություն ունեցող անձանց համար,
- անվտանգային նկատառումներով անվտանգության տեսախցիկների համակարգի տեղադրում Երևանի հանրային օբյեկտներում,

- երթևեկության խելացի կարգավորում բջջային հավելվածի միջոցով, որը հնարավորություն է ընձեռում նույնականացնել ծանր երթևեկությամբ մայրուղիների հատվածները՝ ներկայացնելով առաջարկներ, որպես վերջինիս կանխման այլընտրանք,
- «Լեդ» լուսարձակների կիրառում տարբեր փողոցներում,
- հասարակական տարածքների բարեկարգման միջոցով հանրային ներառական համակագի ձևավորում:

Նունե Պետրոսյանն անդրադարձ է կատարել քաղաքաշինության ոլորտում թվայնացման, քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների, լիցենզավորման, պետական համալիր փորձաքննության ոլորտներում իրագործվող բարեփոխումների ընթացքին: Ընդգծվել է քաղաքաշինության բնագավառում պետական գործառույթների միասնական հարթակի (urban.e-gov.am) ձևավորման անհրաժեշտությունը, որն հնարավորություն կընձեռի օգտվել քաղաքաշինական լիցենզիաների և պետական համալիր փորձաքննության առցանց ծառայություններից, հողօգտագործման փոփոխման առցանց համակարգերից:

2023 թվականի հոկտեմբերի 24-ին Նունե Պետրոսյանը հարցազրույց է ունեցել Հանձնաժողովի լրատվական ծառայության ներկայացուցչի հետ: Ներկայացվել է մատչելի և հարմարավետ բնակարանների հասանելիության ապահովման նպատակով Կոմիտեի կողմից իրականացվող ծրագրերը, Հայաստանի Հանրապետությունում աղետների ռիսկի կանխարգելման և մեղմացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Նունե Պետրոսյանը ներկայացրել է Հայաստանում առկա բնակարանային խնդիրները, առաջացման պատճառները, բնակարանային խնդիրների լուծման հնարավորությունները, անդրադարձել բնակարանային շինարարությանը, բնակարանային շինարարությունը խթանող հիմնական գործիքներին:

2023 թվականի հոկտեմբերի 25-ին Նունե Պետրոսյանը մասնակցել է մի շարք միջոցառումների, մասնավորապես՝

1. «ներառական քաղաքների կառուցում. արագընթաց զարգացումը կայուն համայնքների ձևավորման գործընթացում Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի պետություններում»,
2. «քաղաքային ֆինանս» խորագրով պանելային քննարկում,
3. «կայուն զարգացման նպատակներ» քաղաքաշինական մրցանակաբաշխություն,
4. հռչակագրի ընդունման արարողություն և այլն:

Մասնակից պետությունների ներկայացուցիչները նկարագրել են քաղաքային և տարածական պլանավորման ոլորտներում իրենց փորձը: Քննարկումներ են տեղի ունեցել տարածաշրջանի պետությունների միջև ոլորտային համագործակցության նոր մեխանիզմների ձևավորման անհրաժեշտության վերաբերյալ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Միջոցառման շրջանակում մասնակից պետությունների ներկայացուցիչների կողմից ընդունվել է կոմյունիկե տարածաշրջանի պետությունների միջև քաղաքային և տարածական պլանավորման ոլորտներում համագործակցության զարգացման, փորձի փոխանակման վերաբերյալ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Այցի ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել՝ շարունակել քննարկումները համագործակցության օրակարգի ընդլայնման նպատակով:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

30.10.2023 թվական